ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ

03.05.2019 17:47

Հարգելի՝ փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) և Գերմանիայի փաստաբանների դաշնային պալատի հետ համատեղ **Շիրակի, Լոռու ինչպես նաև հարակից այլ մարզերի** փաստաբանների համար կազմակերպում է վերապատրաստման դասընթաց-քննարկում՝ ***«Փաստաբանների պալատների կողմից լրատվամիջոցների և հանրության հետ տարվող աշխատանքները»*** թեմայով:

Վերապատրաստման դասընթացի շրջանակներում զեկույցներով հանդես են գալու **գերմանացի փորձագետներ**՝ Գերմանիայի դաշնային փաստաբանների պալատի հասարակության հետ կապերի գծով գործադիր տնօրեն-մամուլի խոսնակ, ***փաստաբան Շտեֆանի Բեյրիխը*** և Գերմանիայի Թյուրինգիա քաղաքի փաստաբանների պալատի նախագահ, Գերմանիայի դաշնային փաստաբանների պալատի մամուլի և հանրության հետ աշխատանքի հանձնաժողովի անդամ, ***փաստաբան Յան Հելգե Քեսթելը***, ինչպես նաև ***ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը***:

Վերապատրաստման դասընթացի շրջանակներում հյուրընկալելու ենք նաև IRZ ծրագրերի մենեջեր՝ Ամալիա Վուքերթին:

Դասընթացը տեղի է ունենալու 2019թ. մայիսի 15-ին, ժամը 10:00-ից 17:00-ն՝ քաղաք Գյումրի, Հաղթանակի պողոտա 25 հասցեում գտնվող «Բեռլին Արտ» համալիրի դահլիճում:

Դասընթացն անցկացվելու է հայերեն և գերմաներեն լեզուներով՝ համաժամանակյա թարգմանությամբ:

Դասընթացին մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի 8 (ութ) ակադեմիական ժամ վերապատրաստում: Դասընթացին նախապես գրանցված մասնակիցներին դասընթացի ավարտին կտրվի մասնակցության վկայական:

Դասընթացին կարող են մասնակցել **ոչ ավել, քան 30 (երեսուն) փաստաբան:** Նախապատվությունը կտրվի դասընթացին ավելի վաղ գրացված փաստաբաններին: Դասընթացին գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել **ani.gharibyan@advocates.am էլ. հասցեին**՝ նշելով Ձեր արտոնագրի համարը և հեռախոսահամարը:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ԳՐԱՆՑՎԵԼ, ԵԹԵ ՎՍՏԱՀ ԵՔ, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴՐԱՆ ԺԱՄԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԱՄԲՈՂՋ ԾԱՎԱԼՈՎ:

Առդիր՝ դասընթացի օրակարգը

Առաջարկվող նորություններ

21.01.2016ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ

05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })